Արմավիրի մարզի <<Մերձավանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

Հաստատում եմ

Տնօրեն՝ Զ.Ստեփանյան

Թեմատիկ պլանավորում

2022-2023 ուստարի

Տարեկան

Առարկան հայոց պատմություն

Դասարան VI

Ժամաքանակ 68 ժամ

Ուսուցիչ Հարությունի Սարգսյան

Պահպանված է ուսպլանով նախատեսված ժամաքանակը

Փոխտնօրեն՝ Է.Թորոսյան

Համապատասխանում է պետական չափորոշիչին և ծրագրին

Մ/մ նախագահ՝ Վ.Սարգսյան

Թեմատիկ պլանավորում
«Հայոց պատմություն»
6-րդ դասարան
Շաբաթական 2 ժամ
Տարեկան 68 ժամ

Դասագրքի հեղինակներ՝
Հայոց պատմություն (հնագույն և հին շրջան): 6-րդ դասարանի դասագիրք /Հարությունյան Բ., Բարխուդարյան Վլ., Ղարիբյան Ի., Հովհաննիսյան Պ./ – Եր.: «ՄԱՆՄԱՐ», 2018.

Ներածություն:			
Նպատակ			Նպաստել «Հայոց պատմություն» առարկայի 6-րդ դասարանի բովանդակային հիմնական նյութի, հայոց պատմության հնագույն շրջանի մասին պատկերացումների ձևավորմանը:
Վերջնարդյունքներ			6-րդ դասարանի «Հայոց պատմություն» առարկայի ուսումնական տարվա ընթացքում անցնելիք նյութի ընդհանուր բնութագրի և հիմնական բովանդակության մասին: **Կարողանա՝** ընդհանուր գծերով ներկայացնել 6-րդ դասարանի «Հայոց պատմություն» առարկայի ուսումնական տարվա ընթացքում անցնելիք նյութի ընդհանուր բովանդակությունը, Թվարկել հայ ժողովրդի պատմության վաղ շրջանից մինչև 4-5-րդ դարերի կարևոր իրադարձությունները, պետական կազմավորում-ները, նշանավոր արքայատոհմերը:
Ժամ	**Ժամ**	**Էջ**	**Դաս**
1	1	3-5	Ներածություն
Բաժին I **Հայաստանը Հնագույն Շրջանում**			
Թեմա I **Հայոց Հայրենիքը**			
Նպատակ			Նպաստել Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական դիրքի, բարձր գագաթների, լճերի, գետերի, վարչական բաժանման վերաբերյալ գիտելիքներ ձեռք բերմանը, համեմատելու, արժևորելու կարողությունների ձևավորմանը:
Վերջնարդյունքներ			**Կարողանա՝** • ներկայացնել և բացատրել Հայրենիք (բնօրրան) հասկացությունը, Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական դիրքը, օտարների կողմից հայերին և Հայաստանին տրված անունները • քարտեզի վրա ցույց տալ Հայկական լեռնաշխարհի լեռները, գետերը, լճերը
2	1	6-8	1.Հայոց Հայրենիքը. Հայկական լեռնաշխարհը՝ հայերի հայրենիք:

3	1	8-11	1.Հայոց Հայրենիքը. Հայկական լեռնաշխարհը՝ հայերի հայրենիք:
4	1	11-13	1.Հայոց Հայրենիքը. Հայաստանի պատմավարչական բաժանումը:
Թեմա II **Հայկական լեռնաշխարհը որպես մարդկության հնագույն բնօրրան**			
Նպատակ			Նպաստել նախնադարի և նրա փուլերի, նախամարդու կենցաղի, պետության առաջացման վերաբերյալ գիտելիքների ձեռք բերմանը, բացատրելու, բնութագրելու, համեմատելու, գնահատելու, տեսակետ հայտնելու կարողությունների ձևավորմանը:
Վերջնարդյունքներ			***Կարողանա՝*** • ներկայացնել և համեմատել նախնադարի փուլերը, բնակատեղիները • բնութագրել Հայկական լեռնաշխարհի բնիկների զբաղմունքը, աշխատանքի գործիքները, հասարակական խմբերը նախնադարյան համայնական հասարակարգում
5	1	18-20	Նախնադարի պարբերացումը
6	1	20-23	Միջին քարի դար
7	1	23-28	Բրոնզի դար
8	1		Կրկնություն
Թեմա III **Վաղ պետական կազմավորումները** **Վաղ պետական կազմավորումները Հայաստանի տարածքում**			
Նպատակ			Նպաստել Հայկական լեռնաշխարհի վաղ պետական կազմավորումների վերաբերյալ գիտելիքներ ձեռք բերմանը, տվյալ ժամանակաշրջանի կարևոր իրադարձությունները, փաստերը բացատրելու, բնութագրելու, համեմատելու, եզրահանգումներ անելու, տեսակետ հայտնելու և հայ ժողովրդի բնիկ, հնագույն ազգ լինելու հանգամանքը արժևորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ			**Կարողանա՝** • բացատրել հայ ժողովրդի բնիկ լինելու և հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանելիության փաստերը • Ներկայացնել հայերի ծագման մասին պատմող որևէ ավանդազրույց: • Թվարկել Հայկական լեռնաշխարհի վաղ պետական կազմավորումներից մի քանիսը:
9	1	31-32	Հայաստանը հնդեվրոպական նախահայրենիք
10	1	32-34	Հայաստանը հնդեվրոպական նախահայրենիք
11	1	35-36	Վաղ պետական կազմավորումների առաջացումը:
12	1	37-38	Վաղ պետական կազմավորումների առաջացումը:
13	1		Կրկնություն
14	1		Գործնական աշխատանք
Բաժին II **Հայաստանը հին շրջանում**			

Թեմա IV **Վանի համահայկական թագավորությունը**			
Նպատակ			Նպաստել առաջին համահայկական թագավորության վերաբերյալ գիտելիքների ձեռք բերմանը, թագավորության ստեղծման նախադրյալների, զարգացման ընթացքի ու անկման հետ կապված կարևորն իրադարձությունները բացատրելու, նշանավոր փաստերն ու արքաներին համեմատելու, գնահատելու կարողությունների ձևավորմանը:
Վերջնարդյունքներ			***Կարողանա՝*** • Ներկայացնել Վանի թագավորության գոյության ժամանակահատվածը, մայրաքաղաքը, պետության տարբեր անվանումները, կարևոր իրադարձությունները • թվարկել արքաների անունները ըստ գահակալման ժամանակագրական հաջորդականության՝ նշելով մի քանի արքաների գահակալման տարեթվեր
15	1	42-44	Վանի թագավորության հիմնադրումը Ք. ա. IX դարում
16	1	44-45	Վանի թագավորության հզորացումը (Մենուա)
17	1	46-48	Վանի թագավորության հզորացումը /Մանմար/ (Արգիշտի I և Սարդուրի II:)
18	1	48-49	Թագավորության պայքարն արտաքին ուժերի դեմ:
19	1	49-50	Թագավորության անկումը
20	1		**Կրկնություն**
21	1		Թեմատիկ գրավոր աշխատանք
Թեմա V **Հայկազուն – Երվանդակաների Թագավորությունը**			
Նպատակ			Նպաստել Հայկազուն – Երվանդակաների թագավորության վերաբերյալ գիտելիքների ձեռք բերմանը, թագավորության ստեղծման, զարգացման ընթացքի ու անկման հետ կապված կարևորն իրադարձությունները բացատրելու, նշանավոր փաստերն ու արքաներին համեմատելու, գնահատելու կարողությունների ձևավորմանը:
Վերջնարդյունքներ			***Կարողանա՝*** • Ներկայացնել և բնութագրել Հայկազունի Երվանդական արքաներին - Ներկայացնել և բացատրել Ք. ա. IV-III դդ, հայոց պատմության կարևոր փաստերն ու իրադարձությունները - Բացատրել հակապարսկական ապստամբությունների պատճառները - Թվարկել Ք.ա. IV-III դդ. ստեղծված չորս հայկական թագավորությունները
22	1	54-57	Երվանդակաների թագավորության հիմնադրումը
23	1	57-60	Երվանդակաների թագավորության հիմնադրումը/Ք. ա. 522–521թթ. Հակապարսկական ապստամբությունը:
24	1	63-65	Երվանդակաների թագավորությունը Ք. ա. IV-III դարերում
25	1	65-67	Երվանդակաների թագավորությունը Ք. ա. IV-III դարերում- /Հայակական թագավորությունները Ք. ա. III դարում /

Թեմա VI **Մեծ Հայքի Արտաշեյան թագավորությունը**			
Նպատակ			Նպաստել Հայոց թագավորությունների անկախացման, Արտաշես արքայի գահակալության շրջանի վերաբերյալ գիտելիքների ձեռք բերմանը, Արտաշեսի միավորիչ գործունեությունը, բարենորոգումները, Արտաշատ մայրաքաղաքի կառուցումը և Արտաշես արքայի դերը հայոց պատմության մեջ բացատրելու, գնահատելու, արժևորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունք			***Կարողանա՝*** • Ներկայացնել Արտաշես I-ի գահակալման ժամանակաշրջանում տեղի ունեցած կարևոր իրադարձությունները • արժևորել իրավիճակը ճկուն կերպով օգտագործելու՝ Արտաշես ստրատեգոսի կարողությունը, որի շնորհիվ Հայաստանը վերականգնեց իր անկախությունը • թվարկել բարենորոգումները, կատարած շինարարական աշխատանքները
26	1	70-72	Հայկական թագավորությունների անկախացումը
27	1	73-75	Արտաշես I-ի բարենորոգումները:
28	1	75-76	Արտաշես I-ի բարենորոգումները:
29	1	75-76	Արտաշես I-ի բարենորոգումները:
30	1		**Կրկնություն**
Թեմա 7 Հայաստանը՝ աշխարհակալ տերություն			
Նպատակ			Նպաստել՝ Տիգրան Մեծի և Հայաստանի աշխարհակալ տերության, հայ-հռոմեական պատերազմների, Արտավազդ II-ի,Արտաշեյան վերջին արքաների և թագավորության անկման վերաբերյալ գիտելիքների ձեռք բերմանը, թագավորության կարևոր իրադարձությունները բացատրելու, նշանավոր փաստերն ու արքաներին համեմատելու, գնահատելու Արտաշեյան արքայատոհմի դերը հայոց պատմության մեջ արժևորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունք			***Կարողանա՝*** • Ներկայացնել և բացատրել հայկական հողերի միավորումն ավարտելու, դաշնակից ձեռք բերելու ուղղությամբ Տիգրան II-ի ձեռնարկած քայլերը, Տիգրան II-ի նվաճումները, հայ-հռոմեական պատերազմի առիթը, խոշոր ճակատամարտերը, Արտաշատի պայմանագիրը, Արտավազդ 2-ի վարած քաղաքականությունը • Բնութագրել Տիգրան II, Արտավազդ II արքաներին • կազմել Արտաշեյան թագավորների գահացանկը, • արժևորել Արտաշեյան հզոր արքաների և արքայատոհմի դերը
31	1	79-80	Տիգրան II Մեծը և հայկական տերության ստեղծումը:
32	1	81-83	Կապադովկիայի ռազմակալումը:
33	1	84-85	Տերության տարածքը և բնակչությունը
34	1	85-88	Տերության տարածքը և բնակչությունը
35	1	89-94	Հայ-հռոմեական պատերազմը

36	1	94-97	Հայ-հռոմեական պատերազմը
37	1		**Կրկնություն**
38	1	100-101	Մեծ Հայքի թագավությունն Արտավազդ II-ի օրոք
39	1	102-104	Մեծ Հայքի թագավությունն Արտավազդ II-ի օրոք
40	1	104-107	Մեծ Հայքի թագավությունն Արտավազդ II-ի օրոք
41	1	109-111	Մեծ Հայքի թագավորությունը վերջին Արտաշեսյանների օրոք
42	1	111-112	Մեծ Հայքի թագավորությունը վերջին Արտաշեսյանների օրոք
43	1		**Կրկնություն**
44	1		Թեմատիկ գրավոր աշխատանք
Թեմա VIII **Մեծ Հայքի Արշակունյաց թագավորությունը 1-3-րդ դարերում/ Մեծ Հայքի Արշակունյաց թագավորությունը (I-III Դարեր)**			
Նպատակ			Նպաստել Մեծ Հայքում Արշակունիների թագավորության հիմնադրման, նշանավոր արքաների ու նրանց գործունեության վերաբերյալ գիտելիքների ձեռք բերմանը: Զարգացման ընթացքի հետ կապված կարևորն իրադարձությունները բացատրելու, նշանավոր փաստերն ու արքաներին համեմատելու, գնահատելու կարողությունների ձևավորմանը
Վերջնարդյունք			***Կարողանա՝*** Ներկայացնել և բացատրել Մեծ Հայքում Արշակունիների թագավորության հիմնադրումը, նշանավոր արքաների գործունեությունը համեմատել հայ Արշակունի տարբեր թագավորների գործունեությունը
45	1	115-116	Արշակունյաց արքայատոհմի հաստատումը Հայաստանում
46	1	116-119	Արշակունյաց արքայատոհմի հաստատումը Հայաստանում
47	1	119-121	Արշակունյաց արքայատոհմի հաստատումը Հայաստանում
48	1	123-124	Հայաստանը II-III դարերում
49	1	124-126	Հայաստանը II-III դարերում
50	1	126-128	Հայաստանը II-III դարերում
51	1		**Կրկնություն**
Թեմա IX **Հին Հայաստանի պետական կարգը, տնտեսությունը, սոցիալական կառուցվածքը / Հին Հայաստանի պետական կարգը, տնտեսությունը և հասարակական կառուցվածքը**			
Նպատակ			Նպաստել Հին Հայաստանի պետական կարգի, տնտեսության, սոցիալական կառուցվածքի մասին գիտելիքների ձեռք բերմանը, Հին Հայաստանի պետական կառավարման կարգը, տնտեսության ճյուղերը, քաղաքներն և գյուղական համայնքները բնութագրելու, բացատրելու, համեմատելու, բանակի դերը պետության կայացման գործում արժևորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ			**Կարողանա՝** • Ներկայացնել և բացատրել Հին Հայաստանի պետական և տնտեսական կյանքի առանձնահատկությունները, • Ներկայացնել և համեմատել հասարակության խավերը Հին Հայաստանի նշանավոր քաղաքները • Թվարկել դրամ հատած առաջին հայ թագավորներին • Բնութագրել Հին Հայաստանի արքունիքն ու գործակալությունները

			• Արժևորել հայոց բանակի դերը
52	1	132-135	Պետական կարգը
53	1	135-136	Պետական կարգը
54	1	139-141	Տնտեսությունը:
55	1	141-143	Տնտեսությունը:
56	1	143-146	Տնտեսությունը:
57	1		**Կրկնություն**
			Թեմա X Հին Հայաստանի մշակույթը
Նպատակ			Նպաստել Հին Հայաստանի մշակութի վերաբերյալ գիտելիքների ձեռք բերմանը, հին Հայաստանի մշակույթի ձեռքբերումները համեմատելու, համադրելու, բացատրելու, բնութագրելու, արժևորելու կարողությունների զարգացմանը
Վերջնարդյունքներ			***Կարողանա*** ՝ • բացատրել Հելլենիզմ հասկացությունը • ներկայացնել հեթանոսական նոր դիցարանը, տոմարը, • թվարկել և վերարտադրել հայկական հնագույն էպոսը, առասպելները, հին հայկական վեպը • համեմատել հին ու նոր դիցարանը • ներկայացնել գրային համակարգերը, գիտության և արվեստի ճյուղերը
58	1	149-151	Վաղ և հին շրջանի մշակույթը
59	1	151-152	Հոգևոր մշակույթը
60	1	153-155	Հոգևոր մշակույթը
61	1	155-157	Հոգևոր մշակույթը
62	1	158-160	Հոգևոր մշակույթը
63	1	161-163	Նյութական մշակույթը
64	1	161-163	Նյութական մշակույթը
65	1		**Կրկնություն**
66	1		Գործնական աշխատանք
67	1	165-171	**Կրկնություն**
68	1		**Ամփոփիչ կրկնություն**

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ի՞նչ է ուսումնասիրում հայոց պատմությունը:
2. Ի՞նչ ժամանակաշրջան է ընդգրկում 6-րդ դասարանի «Հայոց պատմություն» առարկայի դասընթացը:

3. Նշանավոր հայկական ի՞նչ պետական կազմավորումներ, պետություններ և արքայատոհմեր են գոյություն ունեցել վերոնշյալ ժամանակաշրջանում:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

- «Հայոց պատմություն» առարկայի դասընթացը ընդգրկում է հնագույն ժամանակներից մինչև 3-րդ դարի վերջն ընկած ժամանակահատվածի պատմությունը:
- Հայաստանում են ստեղծվել Արատտայի, Հայասայի, Նաիրի, Արարատյան Հայկազունիների, Արտաշեսյանների թագավորությունները: (Թվարկել առնվազն 2-ը)

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

- Բացատրել, որհայոցպատմությունննուսումնասիրումէհայերիևՀայաստանիպատմությունը:
- Ըստ ժամանակագրության թվարկել հայկական նշանավոր երկու արքայատոհմերը. Երվանդունիներ և Արտաշեսյաններ:

Բաժին I
Հայաստանը Հնագույն Շրջանում:
Գլուխ /Թեմա 1

Հայոց Հայրենիքը

Դաս 1.Հայոց Հայրենիքը. Հայկական լեռնաշխարհը՝ հայեր հայրենիք /Մանմար/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ո՞րն է հայերի հայրենիքը:
2. Ինչպիսի՞ դիրք ունի Հայկական լեռնաշխարհը հարևան երկրների համեմատ:
3. Ի՞նչ անվանումներ են տվել օտարները մեր երկրին:
4. Ո՞րն է Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր լեռնագագաթը:
5. Ո՞րն է ՀՀ ամենաբարձր գագաթը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

- Հայերի հայրենիքը Հայկական լեռնաշխարհն է:
- Հայկական լեռնաշխարհի ունի բարձրադիր լեռնային դիրք, որի պատճառով հաճախ անվանում են Լեռնային երկիր, Լեռնային կղզի:
- Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր գագաթը Արարատն է՝ Մեծ Մասիսը:
- ՀՀ ամենաբարձր լեռը՝ քառագագաթ Արագածն է:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

- Քարտեզի վրա ցույց տալ Հայկական լեռնաշխարհը:
- Թվարկել օտարների Հայկական լեռնաշխարհին և հայ ժողովրդին տրված անվանումները (Արմենիա և Սոմխեթի, արմեն):
- Համապատասխանեցնել լեռը՝ բարձրությանը:Համեմատել ըստ բարձրության:

Արարատ՝ Մեծ Մասիս	4096 մ
Սիս՝ Փոքր Մասիս	5165 մ
Արագած	3925 մ

Դաս 1.Հայոց Հայրենիքը. Հայկական լեռնաշխարհը՝ հայերի հայրենիք /Մանմար/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Որո՞նք են Հայկական լեռնաշխարհի խոշոր լճերը:
2. Ո՞ր խոշոր լիճն է գտնվում ՀՀ ում:
3. Ո՞ր խոշոր լիճն է քաղցրահամ:
4. Որո՞նք են Հայկական լեռնաշխարհի խոշոր գետերը:
5. Ո՞րն է հայոց մայր գետը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

- Հայկական լեռնաշխարհի առավել հայտնի խոշոր լճերն են Վանա, Սևանա, Ուրմիա լճերը :
- ՀՀ-ում է գտնվում Սևանա լիճը:
- Քաղցրահամ լիճը Սևանն է /Գեղամա լիճը/:
- Հայկական լեռնաշխարհի խոշոր գետերն են Տիգրիսը, Եփրատը, Արաքսը,Ճորոխը, Կուրը: (Թվարկել առնվազն 2 -ը)
- Հայոց մայր գետը Արաքսն է՝ Երասխը, որը ամբողջությամբ հոսում է Հայաստանի տարածքով:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

- Քարտեզի վրա ցույց տալ Հայկական լեռնաշխարհի խոշոր լճերը:
- Քարտեզի վրա ցույց տալ Արաքս գետը:
- Նշված լճերից ընտրել
  - քաղցրահամը
  - ամենաաղին

  ա. Ուրմիա բ. Սևանա գ. Վանա

Քաղցրահամ	Ամենաաղի

Դաս 1.Հայոց Հայրենիքը. Հայաստանի պատմավարչական բաժանումը /Մանմար/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1.Վարչական ի՞նչ մասերի էր բաժանվում Հայկական լեռնաշխարհը:

2. Որքա՞ն է կազմել Մեծ Հայքի և Փոքր Հայքի տարածքը:
3. Քանի՞ նահանգների է բաժանվել Մեծ Հայքը:
4. Որքա՞ն է ՀՀ տարածքը:
5. Ո՞րն է Հայկական 2 -րդ պետությունը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

- ՄեծՀայքևՓոքրՀայք
- Մեծ Հայքի տարածքը կազմել է 300000 քառ.կմ և Փոքր Հայքը՝80000 քառ.կմ :
- Մեծ Հայքը բաժանվել է 15 նահանգների:
- ՀՀ տարածքն կազմում է մոտ 30000 քառ.կմ:
- Հայկական երկրորդ պետությունը Արցախի հանրապետությունն է:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

- Համեմատել Մեծ Հայքի և Փոքր Հայքի տարածքները (300000 քառ.կմ և Փոքր Հայքը՝80000 քառ.կմ):
- Թվարկել 15 նահանգներից առնվազն 2-ը. Այրարատ, Գուգարք, Սյունիք, Աղձնիք, Կորճայք, Մոկք, Վասպուրական, Արցախ, Տուրուբերան, Ուտիք, Ծոփք, Պարսկահայք, Փայտակարան, Բարձր Հայք, Տայք:
- Քարտեզի վրա ցույց տալ Մեծ Հայքը և Փոքր Հայքը, Հայաստանի Հանրապետությունը և Արցախի Հանրապետութունը:

Գլուխ /Թեմա II

Հայկական լեռնաշխարհը որպես մարդկության հնագույն բնօրրան

Դաս 1.Նախնադարի պարբերացումը /«Մանմար»/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ի՞նչ է նախնադարը և ի՞նչ փուլերի է այն բաժանվում:
2. Քանի՞ենթափուլ ունի քարի դարը:
3. Ի՞նչ աշխատանքային գործիքներ է ունեցել նախամարդը հին քարի դարում:
4. Ի՞նչ զբաղմունքներ է ունեցել նախամարդը հին քարի դարում:
5. Ո՞րոնք էին նախամարդու կարևոր նվաճուները հին քարի դարում:

Առարկայիչափորոշչայիննվազագույնպահանջներըկատարելուհամարսովորողըպետք է իմանա՝

- Մարդկության պատմության ամենավաղ շրջանը հայտնի է նախնադար անունով:
- Նախնադարյան մարդը օգտագործել է քարե հատիչ, ծակիչ, կտրիչ, քերիչը և այլ գործիքներ:
- Նախնադարյան մարդը զբաղվել է որսորդությամբ, ձկնորսությամբ և հավաքչությամբ:
- Նախնադարյան մարդու կարևոր նվաճումներից էր կրակի ստացումն ու օգտագործումը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

- Ըստ հաջորդականության թվարկել նախնադարի մեծ փուլերը. քարի դար, պղնձի-քարի դար, բրոնզի դար:
- Բացատրել, թե ինչո՞ւ է նախնադարի առաջին փուլը կոչվում քարի:
  Բնութագրել լ Հայկական լեռնաշխարհի բնիկների զբաղմունքը:
- Ըստ հաջորդականության թվարկել քարի դարի ենթափուլերը. հին քարի դար, միջին քարի դար և նոր քարի դար:
- Տեսակետ հայտնել կրակի գյուտի նշանակության վերաբերյալ. տաքացնել կացարանը, կերակուր պատրաստել, խորովել միսը, պաշտպանվել գազաններից: (Թվարկել առնվազն 2 ը):

Դաս 1. Միջին քարի դար/Մանմար/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ո՞րն է նախնադարի երկրորդ փուլը:
2. Որո՞նք են միջին քարի դարում նախամարդու նվաճումները:
3. Ո՞րն է քարի դարի երրորդ փուլը:
4. Ի՞նչ նոր զբաղմունքներ ձեռք բերեց նախնադարյան մարդը նոր քարի դարում:
5. Ո՞ր մետաղն է առաջինը մշակել նախնադարյան մարդը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

- Նախնադարի երկորդ փուլը կոչվում է միջին քարի դար:
- Միջին քարի դարում նախամարդը կիրառեց նետ ու աղեղը, ընտելացրեց առաջին կենդանիներին, մշակեց առաջին բույսերը: (Թվարկել առնվազն 2 ը:)
- Նախնադարի երրորդ փուլը նոր քարի դարն է:
- Նեոլիթյան հեղափոխության ձեռքբերումներից էր հողագործությունը և անասնապահությունը, արհեստագործությունը և պարզ փոխանակությունը:
- Մետաղներից առաջինը պղինձն էր, որի հետ առնչվեց նախնադարյան մարդը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

- Հաջորդաբար թվարկել հին քարի դարին հաջորդող փուլերը:
- Բացատրել, թե ինչո՞ւ է ժամանկաշրջանը կոչվել պղնձի-քարի դար: Քանի որ, պղնձե փափուկ գործիքների հետ զուգահեռ շարունակում էին կիրառել քարե գործիքներ
- Նշվածներից ընտրել այն մետաղը, որը նախամարդը առաջինն է մշակել:

ա. Պղինձբ. բրոնզգ. երկաթ

Դաս 1.Բրոնզի դար /Մանմար/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ինչպե՞ս նախնադարյան մարդը ստացավ բրոնզը:
2. Ի՞նչ առավելություն ունի բրոնզը պղնձի համեմատ:
3. Որո՞նք են բրոնզի դարաշրջանի նվաճումները:
4. Ո՞ր մետաղը սկսեց մշակել նախնադարյան մարդը բրոզնի դարի ընթացքում:
5. Ե՞րբ ստեղծվեցին առաջին պետական կազմավորումները Հայկական լեռնաշխարհում:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

- Բրոնզի դարի ընթացքում մարդիկ հանքաքարից կարողացան ստանալ երկաթը:
- Առաջին պետական կազմավորումները Հայկական լեռնաշխարհի տարածքում ստեղծվել են Ք.ա. 4-րդ հազարամյակի վերջին և 3-րդ հազարամյակի սկզբին:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

- Բացատրել Պղնձի և անագի, կամ պղնձի և մկնդեղի համաձուլվածքից առաջացավ բրոնզը:
- Բացատրել բրոնզի առավելությունները. բրոնզից պատրաստված աշխատանքային գործիքներն ու զենքերը ավելի ամուր էին:

Գլուխ /Թեմա III

Վաղ պետական կազմավորումները

/Վաղ պետական կազմավորումները Հայաստանի տարածքում/

Դաս 1.Հայաստանը Հնդեվրոպական նախահայրենիք: /Մանմար/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ինչո՞ւ են հայերը համարվում բնիկ ժողովուրդ:
2. Ո՞ր լեզվաընտանիքին են պատկանում հայերենը:
3. Ի՞նչ գիտեք «Հայկ և Բել» առասպելի մասին:
4. Ըստ Աստվածաշնչի, ո՞ր տարածքում է եղել Եդեմ-Դրախտը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

- Հայերենը պատկանում են հնդեվրոպական լեզվաընտանիքին:
- Հայ ժողովրդի ծագման մասին ամենահայտնի առասպելը «Հայկ ու Բել» առասպելն է, որից իմանում ենք, որ հայերիս նախահայրը Հայկն է:
- «Աստվածաշունչ» մատյանում պատմվում է, որ Աստված առաջին մարդուն արարել է Դրախտում, իսկ այն գտնվում է Եփրատ և Տիգրիս գետերի ակունքներում, իսկ այդ գետերի ակունքները գտնվում են Հայկական լեռնաշխարհում:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

- Բացատրել հայերի բնիկ ժողովուրդ լինելը: Նույն տարածքում դարեր շարունակ մշտապես բնակվող ժողովուրդը համարվում է բնիկ:
- Առանձնացնել հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող մի քանի լեզուներ. ֆրանսերեն, գերմաներեն, պարսկերեն, հնդկերեն և այլն:
- Քարտեզի վրա ցույց տալ Տիգրիս և Եփրատ գետերի ակունքները:
- Վերարտադրել «Հայկ ու Բել» առասպելը:
- Նշվածներից առանձնացնել.

Ըստ հայկական ավանդազրույցի ու՞մ ժառանգներն են հայերը:

ա. Արմենոսի բ. Արամանյակի գ. Հայկի դ. Արամի

Դաս 2.Վաղ պետական կազմավորումների առաջացումը /Մանմար/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ո՞րն է Հայկական լեռնաշխարհի առաջին պետական կազմավորումը:
2. Ի՞նչ պետական կազմավումներ են եղել Հայկական լեռնաշխարհում:
3. Ինչ մասերից էր բաղկացած Հայասայի բանակը:
4. Ու՞մ անունն է ասորեստանյան աղբյուրներում հիշատակվում որպես Ուրարտուի առաջին արքա:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

- Հայկական լեռնաշխարհի առաջին պետական կազմավորումն Արատտան է:

- Հայկական լեռնաշխարհի վաղ պետական կազմավորումներից են. Նաիրին, Հայասան, Ուրարտուն: (Թվարկել առնվազն 2 ը:)
- Հայասայի բանակը բաղկացած էր մարտակառքերից և հետևակից:
- Ասորեստանյան աղբյուրներում, որպես Ուրարտուի առաջին արքա, հիշատակվում է Արամը/Արամայիս/:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

- Քարտեզի վրա ցույց տալ Հայկական լեռնաշխարհի վաղ պետական կազմավորումներից մեկի տարածքը:
- Համեմատել Հայասայի և Հայաստանի արդի բանակը:
- Նշվածներից ընտրել Հայկական լեռնաշխարհի առաջին պետական կազմավորումը.
  ա. Հայասա բ. Արատտա գ. Արմե դ. Նաիրի

Գլուխ /Թեմա IV

Վանի համահայկական թագավորությունը

Դաս – 1 Վանի թագավորության հիմնադրումը Ք. ա. IX դարում /Մանմար/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ե՞րբ է հիմնվել Վանի թագավորությունը:
2. Ի՞նչ անուններով է հայտնի Վանի թագավորությունը:
3. Ո՞վ է եղել Վանի թագավորության առաջին արքան:
4. Ո՞րն է Վանի թագավորության մայրաքաղաքը:
5. Ո՞ր արքան է հիմնել այն:

Առարկայիչափորոշչայիննվազագույնպահանջներըկատարելուհամարսովորողըպետքէիմանա՝

- Վանի թագավորությունը ստեղծվել է Ք.ա 9-րդ դարում:
- Վանի թագավորության մայրաքաղաքը Տուշպա-Վանն էր:
- Տուշպա-Վան մայրաքաղաքը կառուցել է Սարդուրի I-ը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

- Քարտեզի վրա ցույց տալ Վանի թագավորությյան սահմանները և Տուշպա-Վան մայրաքաղաքը:

- Փաստել Վանի թագավորության մյուս անվանումները. Նաիրի, Ուրարտու, Բիայնիլի, Արարատ: (Նշել առնվազն 2 անվանում)

Դաս 1.Վանի թագավորության հզորացումը (Մենուա) /Մանմար/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ո՞ր արքայի օրոք սկսեց հզորանալ Վանի թագավորությունը:
2. Ի՞նչ շինարարական աշխատանքներ է կատարել Մենուա արքան:
3. Որքա՞ն էր Մենուայի կառուցած ջրանցքի երկարությունը և ի՞նչ անունով էր այն հայտնի:
4. Մենուայի օրոք ո՞ր երկիրն էր Վանի թագավորության հիմնական հակառակորդը:

Առարկայիչափորոշչայիննվազագույնպահանջներըկատարելուհամարսովորողըպետքէ իմանա՝

- Վանի թագավորությունը սկսեց հզորանալ Մենուա արքայի օրոք;
- Մենուա արքայի օրոք է կառուցվել է 72 կմ երկարությամբ «Շամիրամի ջրանցքը»,
- Մենուայի օրոք Վանի թագավորության հիմնական հակառակորդը Ասորեստանն էր:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

- Բացատրել, որ Մենուայի ջրացքի կառուցման հետևանքով Վանի թագավորությունը տնտեսապես ավելի հզորացավ:
- Գնահատել, որ «Շամիրամի ջրանցքը» աշխարհի հնագույն ջրանցքներից է:

Դաս –Վանի թագավորության հզորացումը (Արգիշտի I եվՍարդուրի II) /Մանմար/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ո՞ր արքաների օրոք Վանի թագավորությունը դարձավ աշխարհակալ տերություն
2. Ե՞րբ և ո՞վ է կառուցվել Էրեբունի բերդաքաղաքը:
3. Ներկայիս ո՞ր քաղաքի տարածքում է հիմնվել Էրեբունին:
4. Ո՞ր արքայի օրոք Վանի թագավորության սահմանները ավելի ընդարձակեցին և այն դարձավ «չորս ծովերի» տերություն:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

- Վանի թագավորությունը Արգիշտի I և Սարդուրի II օրոք դարձավ աշխարհակալ տերություն :
- Էրեբունի բերդաքաղաքը կառուցվեց Արգիշտի արքայի օրոք՝ Ք.ծ.ա 782 թ.:

- Սարդուրի II_ի օրոք Վանի թագավորությունը դարձավ «չորս ծովերի» տերություն:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

- Փաստել, որ Էրեբունին կառուցվեց ներկայիս Երևանի տարածքում:
- Քարտեզի վրա ցույց տալ Էրեբունի բերդաքաղաքը:
- Նշվածներից ընտրել Էրեբունու ներկայիս անունը.
  ա. Երևան բ. Արմավիր
- Ըստ ժամանակագրության թվարկել Վանի թագավորության 3 հզոր արքաների անունները:
- Նշվածներից ընտրել Արգիշտի I արքայի գահակալման տարեթիվը:
  ա. Ք.ծ.ա 782-764 թթ. բ. Ք.ծ.ա 810-786 թթ.

Դաս 1.Թագավորության պայքարն արտաքին ուժերի դեմ /Մանմար/
Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ո՞ր երկիրն էր շարունակում մնալ Վանի թագավորության հիմնական թշնամին:
2. Ասորեստանյան ո՞ր արքան կասեցրեց Սարդուրի II-ի առաջխաղացումը:
3. Ո՞ր արքաները հաջորդեցին Սարդուրի II-ին :
4. Ի՞նչ նշանավոր քաղաք կառուցեց Ռուսա II:
5. Ո՞ր քոչվորական ցեղերի հետ դաշնակցեց Ռուսա II:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

- Վանի թագավորոության հիմնական թշնամին Ասորեստանն էր:
- Ասորեստանյան արքան Թիգլաթպալասարը կասեցրեց Սարդուրի II-ի առաջխաղացումը:
- Սարդուրի II – ին հաջորդեցին Ռուսա I և Ռուսա II արքաները:
- Ռուսա II արքայի օրոք կառուցվեց Թեյշեբանինի /Կարմիր բլուր / քաղաքը:
- Ռուսա II դաշնակցեց կիմմերական ցեղերի հետ:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

- Քարտեզի վրա ցույց տալ Թեյշեբանինի /Կարմիր բլուր / քաղաքը:
- Փաստել, որ Թեյշեբանինի /Կարմիր բլուր/ քաղաքը կառուցվեց ներկայիս Երևանի տարածքում:

Դաս 1. Թագավորության անկումը /Մանմար/
Թեմատիկ պլան
Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ովքե՞ր էին Վանի թագավորության վերջին հայտնի արքաները:
2. Ո՞ր ցեղերն էին հյուսիսից արշավում Վանի թագավորություն:
3. Ե՞րբ է անկում ապրել Վանի թագավորությունը:
4. Ո՞վ դարձավ հայոց նոր թագավորության հիմնադիրը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

- Վանի թագավորության վերջին նշանավոր արքաները եղել են Սարդուրի III և Ռուսա III :
- Վանի թագավորությունը անկում է ապրել Ք.ա VII դարում:
- Պարույր Հայկազունին դարձավ հայոց նոր թագավորություն հիմնադիրը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

- Քարտեզի վրա ցույց տալ Հայկական լեռնաշխարհի հյուսիսը, որտեղից արշավում էին սկյութական ցեղերը:
- Բացատրել, որ հյուսիսից արշավող սկյութական ցեղերը էլ ավելի Վանի թուլացրեցին թագավորությունը:

Գլուխ /Թեմա V

Հայկազուն – Երվանդականներ թագավորությունը

Դաս 1.Երվանդականներիթագավորությանհիմնադրումը: /Մանմար/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ո՞վ է Պարույր Նահապետը:
2. Ո՞ր պետությունների հետ Պարույր Նահապետը դաշինք կնքեց ընդդեմ Ասորեստանի:
3. Պարույր Նահապետ ու՞մ կողմից թագադրվեց և ճանաչվեց Հայաստանի արքա:
4. Ի՞նչ անուն է ստացել Հայկազունների արքայատոհմի նոր ճյուղը:
5. Ի՞նչ գիտեք Տիգրան I Երվանդյանի մասին:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

- Պարույր Նահապետը Վանի թագավորության անկումից հետո հաստատված Հայոց թագավորն է:
- Պարույր Նահապետը դաշինք կնքեց /Մեդիայի/ Մարաստանի և Բաբելոնիայի հետ ընդդեմ Ասորեստանի:
- Պարույր Նահապետը թագադրվեց Մարաստանի կողմից և ճանաչվեց Հայաստանի արքա:
- Երվանդ I Սակավակյացի անունով է Հայկազունների արքայատոհմի նոր ճյուղը կոչվում Երվանդական կամ Երվանդունի:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

- Համառոտ բնութագրել Տիգրան I Երվանդյանին: Տիգրան I Երվանդյանը, լինելով դաշնակից, աջակցեց Կյուրոս Մեծին և տապալեցին Մարաստանին:
- Բացատրել, որ Հայաստանը ուներ արտոնյալ դիրք Կյուրոս Մեծի ստեղծած աշխարհակալ տերության մեջ, քանի որ Տիգրան Երվանդյանը Կյուրոս Մեծի դաշնակիցն էր:
- Քարտեզի վրա ցույց տալ Աքեմենյան տերության սահմանները:

Դաս §15.Հայաստանը Աքեմենյան տերության կազմում: /Զանգակ/

Դաս 1.Ք. ա. 522–521թթ. հակա-պարսկական ապստամբությունը: /Մանմար/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

3. Ու՞մ դեմ ապստամբեցին տերության կազմում գտնվող բոլոր երկրները:
4. Ո՞վ է մեզ թողել Բեհիսթունյան արձանագրությունը:
5. Ի՞նչ է պատմում Բեհիսթունյան արձանագրությունը Հայաստանի մասին:
6. Ի՞նչ գիտեք Աքեմենյան տերության XIII սատրապության մասին:
7. Ի՞նչ գիտեք Քսենոփոնի և նրա՝ Հայսատանի մասին նրա թողած տեղեկություններից:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա

- Դարեհ I-ի դեմ ապստամբեցին տերության կազմում գտնվող բազմաթիվ երկրներ՝ Հայաստանը՝ նույնպես:
- Դարեհ I-ինն է մեզ թողել Բեհիսթունյան եռալեզու արձանագրությունը
- Հույն պատմիչ և զորավար Քսենոփոնը իր վկայության մեջ նշել է, որ Հայաստանը հարուստ և հյուրընկալ երկիր էր:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

- Վեր հանել, որ ըստ Դարեհ I-ի թողած Բեհիսթունյան արձանագրության Հայաստանի ապստամբությունները հնարավոր է եղել ճնշել հինգ արշավանքներից հետո:

- Փաստել, որ Հայաստանը Աքեմենյան տերության XIII սատրապությունն էր և այնտեղ իշխում էին Հայկազուն – Երվանդականները:

Դաս2.Երվանդականների թագավորությունը Ք. ա. IV-III դարերում /Մանմար/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ո՞վ էր Ալեքսանդր Մակեդոնացին:
2. Ո՞ր երկրի դեմ պատերազմ սկսեց Ալեքսանդ Մակեդոնացին Ք.ծ.ա 334 թ. :
3. Ի՞նչ հայտնի վճռական ճակատամարտ տեղի ունեցավ Աքեմենյան տերության և Ալեքսանդր Մակեդոնացու բանակների միջև:
4. Աքեմենյան զորքի կազմում հայկական ո՞ր թագավորությունների զորքերն էին մասնակցում:
5. Ի՞նչ է նշանակում հելլենիզմ:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

- Ալեքսանդր Մեծը Մակեդոնիայի թագավորն էր:
- Ք.ծ.ա 334 թ. Ալեքսանդր Մակեդոնացին պատերազմ սկսեց Աքեմենյան տերության դեմ:
- Աքեմենյան տերության և Ալեքսանդր Մակեդոնացու բանակների միջև վճռական ճակատամարտը տեղի ունեցած Գավգամելա կոչվող վայրում:
- Գավգամելայի ճակատամարտում Աքեմենյան զորքի կազմում մասնակցում էին Մեծ Հայքի և Փոքր Հայքի թագավորությունների հայկական զորքերը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

- Քարտեզի վրա ցույց տա Ալեքսանդր Մակեդոնացու ստեղծած տերությունը,
- Բացատրել, որ հելլենիզմ նշանակում է հունականություն:

Դաս 2. Երվանդականների թագավորությունը Ք. ա. IV-III դարերում: /Մանմար/

Թեմատիկ պլան

1. Ո՞րն էր ամենախոշոր տերությունը Ալեքսանդր Մակեդոնացու աշխարհակալ տերության մասնատումից հետո:
3. Ո՞րոնք էին Ք.ա. IV-III դդ. Ստեղծված չորս հայկական թագավորությունները:
4. Ո՞վ նշանակվեց կառավարիչ Մեծ Հայքում:
5. Ո՞վ նշանակվեց կառավարիչ Փոքր Հայքում:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

- Ալեքսանդր Մակեդոնացու մահից հետո նրա ստեղծած աշխարհակալ տերության մասնատումից հետո ամենախոշոր տերությունը Սելևկյանն տերությունն էր:

- Ք.ա. IV-III դդ. Ստեղծված չորս հայկական թագավորություններն են՝ Մեծ Հայքը, Փոքր Հայքը,Կոմմագենեն և Ծոփքը:
- Մեծ Հայքի կառավարիչ նշանակվեց Արտաշեսը, իսկ Փոքր Հայքի կառավարիչ՝ Զարեհը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

- Քարտեզի վրա ցույց տա Հայկական չորս թագավորությունները

Գլուխ / Թեմա VI

Մեծ Հայքի Արտաշեսյան թագավորությունը

Դաս 1.Հայկական թագավորությունների անկախացումը: /Մանմար/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ք. ա 190 թ. ո՞ր ճակատամարտն է տեղի ունեցել:
2. Նշել Ք.ա. II դարից անկախացած 4 հայկական թագավորությունների անվանումները:
3. Ե՞րբ և որտե՞ղ գահակալեց Արտաշես I-ը:
4. Ո՞ր երկիրն էր Մեծ Հայքի հիմնական հակառակորդը:
5. Ինչ գիտեք Արտաշես I արքայի կողմից հայկական տարածքների վերամիավորման մասին:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

- Մագնեսիայի ճակատամարտը տեղի է ունեցել Ք. ծ. ա. 190 թ.:
- Ք.ա. II դարի կեսից անկախացան Մեծ Հայքի, Փոքր Հայքի, Ծոփքի և Կոմմագենեի հայկական 4 թագավորությունները: (Թվարկել առնվազն 2 թագավորության անվանում:)
- Արտաշես I-ը կառավարել է Ք.ա. 189-160 թթ.՝ Մեծ Հայքում:
- Արտաշեսյան արքայատոմի գահակալության շրջանը Ք.ծ. ա. 189-1 թթ. է
- Մեծ Հայքի գլխավոր հակառակորդը Սելևկյան տերությունն էր:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

- Բացատրել, որ Մագնեսիայի ճակատամարտում Սելևկյան պետության պարտության հետևանքով պայմաններ ստեղծվեցին Հայկական թագավորությունների անկախացման համար:
- Քարտեզի վրա ցույց տալ Ք.ա. II դարից անկախացած 4 հայկական թագավորություններից /Մեծ Հայք, Փոքր Հայք, Ծոփք և Կոմմագենե/: (Ցույց տալ առնվազն 2 -ը)
- Ընտրել.
  Որտե՞ղ իրեն թագավոր հռչակեց Արտաշեսը.
  ա. ՄեծՀայք, բ. ՓոքրՀայք գ. Ծոփք
- Արժևորել Արտաշես I արքայի կողմից հայկական տարածքների վերամիավորումը Մեծ Հայքի թագավորության մեջ:

Դաս 2. Արտաշես I-ի բարենորոգումները /Մանմար/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Քանի՞ գավառների բաժանեց Արտաշես I-ը Մեծ Հայքը:
2. Քանի՞ սահմանակալ զորավարություններ ստեղծեց Արտաշես արքան:
3. Ի՞նչ բարեփոխումներ կատարեց Արտաշես I-ը:
4. Հայոց ո՞ր մայրաքաղաքն է կառուցել Արտաշես արքան:
5.Ի՞նչ պատվանուններով են մեծարել Արտաշես I-ին:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

- Արտաշես I-ը Մեծ Հայքը բաժանեց 120 գավառների:
- Արտաշես I-ը ստեղծեց 4 Սահմանակալ զորավարություններ. արևելյան, արևմտյան, հյուսիսային և հարավային:
- Արտաշեսը կառուցեց Արտաշատ մայրաքաղաքը:
- Արտաշես I-ին ժողովուրդը մեծարել ու փառաբանել է «Բարեպաշտ» և «Աշխարհակալ» պատվանուններով:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելո ւհամար սովորողը պետք է կարողանա՝

- Թվարկել տարբեր ոլորտներում Արտաշես I-ի կատարած բարեփոխումները. ռազմական, վարչական, հողային բարեփոխումներ, ճշգրտել է տոմարը: (Թվարկել առնվազն 2 ը:)
- Քարտեզի վրա ցույց տալ Արտաշատ մայրաքաղաքը:
- Բացատրել Արտաշես I-ին տրված «Բարեպաշտ» և «Աշխարհակալ» պատվանունները:

Գլուխ/Թեմա VII
Հայաստանը՝ աշխարհակալտերություն

Դաս1. Տիգրան II Մեծը և հայկական տերության ստեղծումը: /Մանմար/
[Թեմատիկ պլան]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ո՞վքեր հաջորդեցին Արտաշես 1-ին:
2. Ի՞նչ պայմանով արքայազն Տիգրանը վերադարձավ Պարթևստանից:
3. Ե՞րբ և որտե՞ղ գահակալեց Տիգրան II ը:
4. Իր թագավորության երկրորդ տարում ո՞ր տարածքը Տիգրանը միացրեց Մեծ Հայքին:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

- Արտաշես I-ից հետո իշխեց նրա ավագ որդի Արտավազդ I-ը, ում հաջորդեց իր եղբայր Տիգրան I -ը:
- Արքայազն Տիգրանը վերադարձավ Պարթևստանից՝ պարթևներին զիջելով որոշ տարածքներ:
- Տիգրանը թագադրվեց Ք.ա. 95 թ, գահակալեց մինչև. Ք.ա. 55 թ.՝ Մեծ Հայքի Աղձնիք նահանգում:
- Իր գահակալության երկրորդ տարում՝ Ք.ա. 94 թ., Տիգրանը Ծոփքը վերամիավորեց Մեծ Հայքին:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

- Քարտեզի վրա ցույց տալ Պարթևսատանը և Ծոփքը:
- Արժևորել Ծոփքը Մեծ Հայքին վերամիավորելու փաստը, որով վերականգնվեց Մեծ Հայքի ամբողջականությունը:
- Ըստ գահակալման հաջորդականության դասավորել Արտաշեսյան արքաներին:

1	
2	
3	
4	

Արտաշես , Տիգրան II, Տիգրան I, Արտավազդ I

Դաս 1 Տիգրան II Մեծը և հայկական տերության ստեղծումը: /Մանմար/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ե՞րբ կնքվեց հայ- պոնտական դաշինքը,
2. Ո՞ր տարածքը նվաճվեց հայ-պոնտական դաշինքի համաձայն:
3. Ո՞ր երկրի դեմ արշավեց Տիգրան Մեծը Ք.ա 87թ .:
4. Ի՞նչ տիտղոս շնորհվեց Տիգրանին պարթևական արքունիքի կողմից:
5. Ինչպե՞ս Տիգրանը բազմեց Սելևկյանների գահին:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

- Հայ- պոնտական դաշինքը կնքվեց Ք.ա. 94 թ.:
- Հայ- պոնտական դաշինքի համաձայն Ք.ա. 93 թ. նվաճվեց Կապադովկիան:
- Ք.ա. 87 թ. Տիգրան Մեծն արշավեց Պարթևստանի վրա՝ ջախջախելով պարթևական զորքը , հասավ Պարթևստանի ամառային մայրաքաղաք:
- Պարթևական արքունիքը Տիգրանին շնորհեց «Արքայից արքա» տիտղոսը:
- Ք. ա. 84 թ. Սելևկյանները Տիգրան Մեծին հրավիրեցին բազմելու իրենց գահին:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

- Ըստ ժամանակագրության թվարկել Տիգրան Մեծի նվաճումները. Պարթևստան, Սելևկյան Տերություն և այլն: (Թվարկել առնվազն 2 -ը:)
- Քարտեզի վրա ցույց տալ Տիգրան Մեծի տերության սահմանները:
- Բացատրել «արքայից արքա» տիտղոսը:

Դաս 2. Տերության տարածքը եվ բնակչությունը/Մանմար/
[Թեմատիկ պլան]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ինչպիսի՞ տերություն ստեղծեց Տիգրան Մեծը, քանի՞ անգամ էր այն մեծ Մեծ Հայքի թագավորության տարածքից:
2. Որքա՞ն էր բուն հայկական զորքի թիվը Տիգրան Մեծի օրոք:
3. Որտե՞ղ կառուցվեց նոր մայրաքաղաքը:
4. Բացի մայրաքաղաքից Տիգրանի անունով Մեծ Հայքի ո՞ր նահանգում է հիմնադրվել Տիգրանակերտ անունով քաղաք:
5. Ի՞նչ պատվանուններ են շնորհել ժամանակակիցները Տիգրան II _ին:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

- Տիգրան Մեծը ստեղծեց հզոր մի աշխարհակալություն, այն 10 անգամ ավելի մեծ էր Մեծ Հայքի թագավորության տարածքից:
- Տիգրան Մեծը ստեղծեց հզոր բանակ, բուն հայկական զորքը կազմում էր 120 հազար:
- Բացի մայրաքաղաքից Տիգրանի անունով բնակավայր է հիմնադրվել նաև Արցախում:
- Հայոց աշխարհակալ արքային ժամանակակիցները անվանել են «թագավորներից մեծագույնը» :

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

- Բացատրել, որ նոր մայրաքաղաք Տիգրանակերտը հիմնվեց մի վայրում, որը և հայոց հողում էր, և համեմատաբար կենտրոնական դիրք էր գրավում տերության մեջ: Դա Տիգրանի թագադրության վայրն էր:
- Քարտեզի վրա ցույց տալ Տիգրանակերտ մայրաքաղաքը և Տիգրան Մեծի աշխարհակալ տերությունը:
- Ընտրել.

ՄեծՀայքիո՞րնահանգումէկառուցելիրմայրաքաղաքըՏիգրանՄեծը:
ա. Այրարատբ. Աղձնիքգ. Ծոփք

Դաս 3.Հայ-հռոմեական պատերազմը /Մանմար/

[Թեմատիկ պլան]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ի՞նչը դարձավ հայ-հռոմեական պատերազմի առիթ:
2. Որո՞նք են հայ–հռոմեական պատերազմի 2 խոշոր ճակատամարտերը:
3. Տիգրան Մեծի օրոք հռոմեացի ո՞ր 2 զորավարները արշավեցին Հայաստան:
4. Ե՞րբ է կնքվել Արտաշատի պամանագիրը:
5. Ինչպե՞ս է մնացել Տիգրանը սերունդների հիշողության մեջ:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

- Հայ–հռոմեական պատերազմի 2 խոշոր ճակատամարտերն են. Տիգրանակերտի և Արածանիի. ճակատամարտերը:
- Տիգրան Մեծի օրոք Հայաստան արշավեցին հռոմեացի զորավարներ Լուկուլլոսն ու Պոմպեոսը:
- Արտաշատի պայմանագիրը կնքվեց Ք.ա. 66 թ.:
- Տիգրան Մեծը մահացավ Ք.ա. 55 թ, նա սերունդների հիշողության մեջ մնաց որպես հզորագույն և հայրենապաշտ տիրակալ:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

- Բացատրել, որ հայ-հռոմեական պատերազմի առիթ հանդիսացավ այն, որ Տիգրան Մեծը հրաժարվեց Լուկուլլոսին հանձնել Մեծ Հայքում ապաստանած իր դաշնակից Միհրդատ 6-ին:
- Համեմատել, Տիգրանակերտի և Արածանիի ճակատամարտերը. Տիգրանակերտի ճակատամարտում հայերը պարտվեցին, Արածանիի ճակատամարտում՝ հաղթանակ տարան:
- Արժևորել Տիգրան Մեծին որպես հայոց ամենանշանավոր արքա:

Դաս 4. Մեծ Հայքի թագավությունն Արտավազդ II-ի օրոք /Մանմար/

[Թեմատիկ պլան]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ո՞վ է հաջորդել Տիգրան Մեծին և ե՞րբ է գահակալել:
2. Հռոմեացի ո՞ր 2 զորավարները արշավեցին դեպի արևելք:

3. Արտավազդ II ը ո՞ր երկրի հետ կնքեց բարեկամության դաշինք:
4. Ինչպե՞ս ավարտվեց Խառանի ճակատամարտը:
5. Ինչպե՞ս ավարտվեց Անտոնիոսի արևելյան արշավանքը և հետևանքներ ունեցավ:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

- Տիգրան II-ին հաջորդեց իր որդի Արտավազդ II-ը, նա գահակալեց Ք.ա. 55-34 թթ.::
- Արևելք արշավեցին հռոմեացի զորավարներ Կրասոսն ու Անտոնիոսը:
- Արտավազդ II ը բարեկամության դաշինք կնքեց Պարթևստանի հետ:
- Արտավազդ II-ը խաբեությամբ գերեվարվեց Անտոնիոսի կողմից, տարվեց Եգիպտոս, որտեղ գերադասեց արժանապատիվ մահը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

- Բնութագրել Արտավազդ II արքային. Նա ստացել էր հիանալի կրթություն, գրում էր ողբերգություններ, ճառեր, պատմական երկեր, հմուտ դիվանագետ (Թվարկել առնվազն 2 բնութագրչներ):
  Բացատրել, որ Խառանի ճակատամարտը ավարտվեց հռոմեական զորքի պարտությամբ և Կրասոսի մահով:
- Կարծիք հայտնել այն մասին, որ հռոմեացի զորավար Անտոնիոսը իր կրած պարտության մեղքը բարդեց հայոց արքա Արտավազդ II-ի վրա:
- Հետևություններ անել Արտավազդ II-ի արժանապատիվ մահվան վերաբերյալ:

Դաս 5. Մեծ Հայքի թագավորությունը վերջին Արտաշեսյանների օրոք /Մանմար/

[Թեմատիկ պլան]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ո՞վ հաջորդեց Արտավազդ II-ին:
2. Ի՞նչ գիտեք Արտաշես II-ի մասին:
3. Ովքե՞ր էին Արտաշեսյան վերջին գահակալները:
4. Ք.ա 2 թ.ին կրկին գահ բարձրացած Տիգրան IV ու՞մ հետ կառավարեց:
5. Ե՞րբ ավարտվեց Արտաշեսյանների կառավարումը Մեծ Հայքում:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

- Արտավազդ II-ին հայոց գահին հաջորդել է իր որդի Արտաշես II-ը:
- Արտաշես II-ի ջանքերով ազատագրվեց Հայաստանը, հատեց դրամներ:
- Տիգրան IV-ը Ք.ա 2 թ.-ին կառավարեց իր քույր Էրատոյի հետ:
- Արտաշեսյան արքայատոհմը Մեծ Հայքում կառավարեց մինչև 1 թ.:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

- Կազմել Արտաշեսյան գահացանկը՝ օգտվելով դասագրքից:
- Գնահատել Արտաշեսյան արքայատոհմի դերը հայոց պատմության մեջ. Հայկական հողերը միավորվեցին մեկ միասնական պետության մեջ, Հայաստանը դարձավ աշխարհակալ տերություն, կառուցվեցին Արտաշատ և Տիգրանակերտ մայրաքաղաքները, հատվեցին դրամներ և այլն: (Թվարկել առնվազն 2 փաստ:)

Գլուխ / Թեմա VIII

Մեծ Հայքի Արշակունյաց թագավորությունը 1-3-րդ դարերում

Դաս 1.Արշակունյաց արքայատոհմի հաստատումը Հայաստանում: /Մանմար/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ինչպիսի՞ իրավիճակ էր տիրում Հայաստանում Արտաշեսյան արքայատոհմի անկումից հետո:
2. Ո՞վ էր Արտաշեսյանների արքայատոհմից հետո գահակալած թագավորներից առավել նշանավոր:
3. Հայոց ո՞ր արքայի անունով էին կոչում Զենոնին:
4. Պարթևստանի Վաղարշ արքան իր եղբայրներից ո՞ւմ էր ուզում նստեցնել հայոց գահին
5. Ե՞րբ առաջին անգամ Վաղարշը և Տրդատը զորքով մտան Հայատան:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

- Արտաշեսյան արքայատոհմի անկումից հետո Հայաստանում գահակալած արքաներից ամենանշանավորը Զենոնն էր:
- Պարթևստանի Վաղարշ արքան իր եղբայրներից հայոց գահին ուզում էր նստեցնել Տրդատին:
- 52 թվականին Վաղարշը և Տրդատը զորքով մտան Հայատան:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

- Բացատրել, որ Հայաստանում հայոց գահին տիրելու համար, հարևան՝ Հռոմի և Պարթևստանի միջև լուրջ պայքար էր ընթանում:
- Կարծիք հայտնել այն մասին, թե ինչու է հայ ժողովուրդը Զենոնին անվանել Արտաշես. Հայոց երկրի շահերից բխող քաղաքականություն էր վարում, յուրացրել էր հայոց սովորությունները, նրա գահակալման տարիները խաղաղ էին:(Նշել առնվազն 1 փաստ:)

Դաս ՏրդատI-ի գահակալումը և գործունեությունը/Մանմար/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Քանի՞ տարի է տևել հայ-պարթևական պատերազմը ընդդեմ հռոմեական կայսրության:
2. Ե՞րբ է տեղի ունեցել Հռանդեայի ճակատամարտը և ինչպե՞ս այն ավարտվեց:
3. Ե՞րբ է գահակալել Տրդատ 1-ը:
4. Որտե՞ղ Տրդատը ճանաչվեց հայոց թագավոր:
5. Ի՞նչ շինարարական աշխատանքներ է կատարել Տրդատ 1-ը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

- Ընդդեմ Հռոմեական կայսրության հայ-պարթևական պատերազմը տևել է 10 տարի:
- Հռանդեայի ճակատամարտը տեղի է ունեցել 62 թ., որտեղ հռոմեական զորքերը խայտառակ պարտություն են կրել:
- Տրդատ 1-ը գահակալել է 66-88 թթ:
- Հռոմում հանդիսավոր պայմաններում կայսրը Տրդատին ճանաչեց հայոց թագավոր:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

- Կարծիք հայտնել, Հռանդեայի ճակատամարտում հռոմեական զորքի խայտառակ պարտությունից հետո, հռոմեական անպարտելի համարվող զորքի՝ ծնկաչոք հայ-պարթևական զորքի նիզակների «լծի» տակով անցնելու փաստի վերաբերյալ:
- Գնահատել Տրդատ I-ին շինարարական գործունեությունը. Գառնու տաճարի կառուցապատումը:

Դաս 2.Հայաստանը II-III դարերում /Մանմար/

[Թեմատիկ պլան]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ո՞վ է հաջորդել հայոց գահին Տրդատ I-ին:
2. Հայոց ո՞ր մայրաքաղաքն է կառուցել Վաղարշ I-ինը:
3. Ո՞ր արքայի գահակալման ժամանակներից է Արշակունիների արքայատոհմի գահակալությունը Հայաստանում դարձել ժառանգական:
4. Ո՞ր արքաները հաջորդեցին Վաղարշ II-ին:
5. Ո՞ր իրադարձությունից հետո է Պարթևստանը կոչվել Պարսկաստան:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

- Տրդատ I-ին հաջորդեց Սանատրուկը:
- Վաղարշ I կառուցել է Վաղարշապատ մայրաքաղաքը:
- Վաղարշ II-ի կառավարման ժամանակներից Արշակունիների արքայատոհմի գահակալությունը Հայաստանում դարձավ ժառանգական:

- Վաղարշ II-ին հաջորդեցին Խասրով I և Տրդատ II արքաները:
- 226 թ. Սասանյան հեղաշրջումից հետո Պարթևստանը հայտնի դարձավ Պարսկաստան անունով:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

- Ըստ գահակալման հաջորդականության դասավորել արքաների անունները.
  ա. Վաղարշ II բ. Տրդատ II գ. Սանատրուկ

1	
2	
3	

- Քարտեզի վրա ցույց տալ Վաղարշապատ մայրաքաղաքը:
- Բացատրել ժառանգականության կարևորությունը. գահը սկսեց ժառանգաբար հորից փոխանցվել որդուն:

Դաս 2. Հայաստանը II-III դարերում /Մանմար/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ո՞վ է հաջորդել Տրդատ II-ին հայոց գահին:
2. Ինչու՞է ր Անակ Պարթևը ուղարկվել Հայաստան:
3. Ե՞րբ վերադարձավ և թագադրվեց Տրդատ III-ը:
4. Ո՞ր գավառում տեղի ունեցավ հայ-հռոմեական միացյալ ուժերի և պարսիկների գլխավոր ճակատամարտը:
5. Ե՞րբ է կնքվել Մծբինի 40-ամյա խաղաղության պայմանագիրը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

- Տրդատ II-ին հաջորդում է ԽասրովII արքան:
- Անակ Պարթևը ուղարկվել էր Հայաստան՝ Խասրով II –ին սպանելու համար:
- 287թ.-ին Տրդատը վերադարձավ Հայաստան և միաժամանակ թագավորեց Հայաստանի արևմտյան մասում:
- Հայ-հռոմեական միացյալ ուժերի և պարսիկների գլխավոր ճակատամարտը տեղի ունեցավ Բասեն գավառում:
- Մծբինի 40-ամյա խաղաղության պայմանագիրը կնքվել է 298 թվականին:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

- Կարծիք հայտնել Անակ Պարթևի կողմից Խասրով II–ի դավադիր սպանության վերաբերյալ:
- Ընտրել Մծբինի հաշտության պայմանագրի թվականը.

ա. 287 թ. բ. 274 թ. գ. 298 թ.

Գլուխ/ Թեմա IX
Հին Հայաստանի պետական կարգը, տնտեսությունը, սոցիալական կառուցվածքը
Հին Հայաստանի պետական կարգը, տնտեսությունը և հասարակական կառուցվածքը

Դաս 1. Պետական կարգը/Մանմար/
Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Քանի՞ տարվա պատմություն ունի հայկական պետականությունը:
2. Ի՞նչ համահայկական թագավորություններ գիտեք:
3. Ո՞վ էր կառավարում Հին Հայաստանը:
4. Որո՞նք են Հին Հայաստանի հիմնական գործակալությունները:
5. Ի՞նչ տիտղոսներ են կրել հայոց հզոր արքաները:

Առարկայիչափորոշչայիննվազագույնպահանջներըկատարելուհամարսովորողըպետքէիմանա՝

- Հայկական պետականությունն ունի 5000 տարվա պատմություն:
- Համահայկական թագավորություններն են. Վանի թագավորությունը, Հայկազունի-Երվանդունիների թագավորությունը, Արտաշեսյանների և Արշակունիների թագավորությունները:
- Հին Հայաստանում պետության գլուխը արքան էր կամ թագավորը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողա՝

- Բնութագրել արքայի գործառույթները. Պատերազմ էր հայտարարում, հաշտություն կնքում, հիմնադրում քաղաներև ամրոցներ, դրամներ հատում, արքայի հրամն ուներ օրենքի ուժ, զորքի գերագույն հրամանատարն էր և այլն: (Թվարկել առնվազն 2 գործառույթ:)
- Թվարկել Հին Հայաստանի երեք հիմնական գործակալությունները. հազարապետությունը, սպարապետությունը, թագադիր ասպետությունը և այլն:
- Մեկնաբանել «Արքաների արքա» /արքայից արքա/, «Մեծ արքա» տիտղոսները:

Դաս 1. Պետական կարգը/Մանմար/
Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ի՞նչ գիտեք հին հայկական բանակի մասին:
2. Ինպիսի՞ կառուցվածք ուներ հայոց բանակը:
3. Ինչպե՞ ս էր կոչվում փաստաթուղթը, որը տեղեկություններ էր հաղուրդում հայոց բանակի մասին:
4. Ի՞նչ է կոչվում պատերազմների ժամանակ հասարակ ժողովրդից հավաքագրված զորքը:
5. Ո՞ր արքայի օրոք է հայոց բանակի թիվը եղել ամենամեծը:

Առարկայիչափորոշչայիննվազագույնպահանջներըկատարելուհամարսովորողըպետքէիմանա՝

- Հայոց բանակը եղել և մնում է հայ ժողովրդի գոյության հիմնական երաշխավորը անցյալում և ներկայում:
- Հին հայոց բանակը կազմված էր հեծելազորից , հետևակից և մարտակառքերից:
- Պատերազմերի ժամանակ հասարակ ժողովրդից հավաքագրված զորքը կոչվում էր աշխարհազոր:
- Ներկայացնել ,որ փաստաթուղթը,որը տեղեկություններ էր հաղուրդում հայոց բանակի մասին կոչվում էր Զորանամակ:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

- Բացատրել այրուձի, հետևակ, աշխարհազոր տերմինները:
- Ցույց տալ
  Ո՞ր արքայի օրոք է հայոց բանակի թիվը դարձել 120000:

ա. Սարդուրի II բ. Տիգրան Մեծ գ. Տրդատ I

- Առանձնացնել հին հայոց բանակի զինատեսակները՝ սուր, դաշույն, նիզակ, նետ ու աղեղ, սաղավարտ, վահան: (Թվարկել առնվազն 3 ը:)

Դաս 2. Տնտեսությունը/Մանմար/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Որո՞նք են Հին Հայաստանի տնտեսության ճյուղերը:
2. Ո՞ր արհեստներն են զարգացածել Հին Հայաստանում :
3. Որո՞նք են գյուղատնտեսության հիմնական ճյուղերը:
4. Առևտրի ի՞նչ տեսակներ կային Հին Հայաստանում:
5. Հայոց ո՞ր արքաներն են դրամ հատել:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

- Հին Հայաստանի տնտեսության հիմնական ճյուղերն էին արհեստագործությունը, գյուղատնտեսությունն ու առևտուրը:
- Հին Հայաստանի զարգացած արհեստներից էին դարբնությունը, զինագործությունն ու ոսկերչությունն ու արծաթագործությունը, զարգացած էին կաշեգործությունը, մանածագործությունը, գորգագործությունը, խեցեգործությունն ու փայտամշակությունը: (Թվարկել առնվազն 3 ը:)
- Գյուղատնտեսության հիմնական ճյուղերն էին. անասնապահությունը, թռչնաբուծությունը, այգեգործությությունը և այլն
- Հին Հայաստանում զարգացած էր ներքին և արտաքին առևտուրը:
- Դրամներ են հատվել հայոց Երվանդ I, Տիգրան II, Արտավազդ II արքաների կողմից: (Թվարկել առնվազն 1 արքայի անուն:)

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

- Բացատրել, որ արհեստագործությունն ու առևտուրը զարգանում էին քաղաքներում, իսկ գյուղատնտեսությունը՝ գյուղական համայնքներում:
- Ցույց տալ, որ Հայկական լեռնաշխարհի լեռնային շրջաններում բնակչության մեծ մասը զբաղվում հիմնականում անասնապահությամբ՝ մանր ու խոշոր եղջերավոր անասուններ, թռչնաբուծություն և այլն: Դաշտային բնակավայրերում զբաղվում էին հողագործությամբ՝ այգեգործություն, բանջարաբոստանային և հացահատիկային մշակաբույսերի մշակմամբ:
- Առանձնացնել արհեստագործության կարևոր ճյուղերը:
- Լրացնել աղյուսակը. զինագործություն, անասնապահություն, փայտամշակություն, քարագործություն, հողագործություն

արհեստագործություն	**գյուղատնտեսություն**
զինագործություն	հողագործություն
փայտամշակություն	անասնապահություն
քարագործություն	

Դաս 2. Տնտեսությունը/Մանմար/

[Թեմատիկ պլան]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ինչպիսի՞ կառուցվածք ուներ Հին Հայաստանի հասարակությունը:
2. Հին Հայաստանի ի՞նչ քաղաքներ գիտեք:
3. Ի՞նչ էին անվանում Հին Հայաստանի գյուղական բնակիչներին:
4. Բացատրեք ազարակ, գեղջավագ, շինական հասկացությունները:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

- Հին Հայաստանի հատնի քաղաքներն էին Տուշպա-Վանը, Էրեբունի, Մենուախինիլի, Արգիշտիխինիլի, Թեյշեբաինի, Արմավիր, Բագարան, Երվանդակերտ, Արտաշատ, Տիգրանակերտ, Վաղարշապատ քաղաքները: (Թվարկել առնվազն 4 քաղաքի անուն:)
- Հին Հայաստանի գյուղական բնակիչներին անվանում էին շինականներ կամ գեղջուկներ: Նրանք էին ընտրում իրենց գյուղի ղեկավարին՝գեղջավագին:
- Ագարակը մասնավոր տնտեսությունն է, գեղջավագը՝գյուղի ղեկավարն է, շինականները գյուղական համայնքի ազատ բնակիչներն էին:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

- Առանձնացնել Հին Հայաստանի բնակչության հիմնական խավերը. Հին Հայաստանի բնակչությունը բաժանված էր երեք հիմնական խավերի՝ազնվականներ, քաղաքային ազատ բնակչություն, գյուղական ազատ բնակչություն:
- Քարտեզի վրա ցույց տալ Հին Հայաստանի նշանավոր 3-4 քաղաք:

Դաս 1.Վաղ և հին շրջանի մշակույթը /Մանմար/
Դաս 2.Հոգևոր մշակույթը/Մանմար/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1 .Ե՞րբ է սկզբնավորվել հայկական մշակույթը:
2. Հայկական հնագույն մշակույթի մասին նյութական ի՞նչ վկայություններ են մեզ հասել:
3. Ի՞նչ են առասպելները և ի ՞նչ հայտնի առասպելներ գիտեք:
4. Ի՞նչ են վիպերգերը և ի ՞նչ հայտնի վիպերգեր գիտեք:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

- Հայ մշակույթի ակունքները գալիս են դեռևս անհիշելի ժամանակներից:
- Մեզ դրանք հասել են պեղումների ժամանակ հայտաբերված նյութերից և ժայռապատկերներից:
- Առասպելները, զրույցները և հին վեպերն արտացոլում են պատմական իրականության ինչ-ինչ կողմեր՝ այսինքն ոչ իրական, չափազանցված դրվագներ:
- Վիպերգերը պարունակում են հիմնականում պատմական հավաստի նյութեր իրապատում,որոնց հերոսները պատմական կերպարներ են:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

- Թվարկել առնվազն 2-3 առասպել, վիպերգ և ընդհանուր գծերով վերարտադրել առնվազն մեկը. (Վահանգն ծնունդը, Հայկ և Բելը, Տորք Անգեղ, Արա Գեղեցիկ և Շամիրամ, Տիգրան և Աժդահակ,Երվանդ և Արտաշես և Սաթենիկ, Արտաշես և Արտավազդ):

Դաս 2.Հոգևոր մշակույթը: Դիցարան /Մանմար/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ի՞նչ գիտեք հին հայերի պաշտամունքի վաղագույն ձևերի մասին՝ բնապաշտություն, բազմաստվածություն:
2. Ի՞նչ համաստեղություն կա հայ աստծու անունով:
3. Ովքե՞ր էին Հին Հայաստանի գերագույն աստվածները:
4. Ի՞նչ անվանումով էին մեծարում Մայր դիցուհի Անահիտին:
5. Ո՞ր հունական աստվածուհու հետ էին համապատասխանեցնում Աստղիկին:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

- Հայ աստվածներից Հայկի անունով էր կոչվում Օրիոն/Հայկի/ համաստեղությունը:
- ՀինՀայաստանիգերագույնաստվածներնէինՀայկնեԱրամազդը:
- Մայր դիցուհի Անահիտին մեծարում էին Ոսկեմայր տիտղոսով:
- Աստղիկին՝ սիրո և գեղեցկության աստվածուհուն համապատասխանեցնում էին հունական աստվածուհի Ափրոդիտեի հետ:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

- Բացատրել, որ հին հայերը սկզբում եղել են բնապաշտ՝ պաշտում էին երկնային մարմիններն ու երևույթները՝ արևը, լուսինը, աստղեր, կայծակ, լեռներ, գետեր, հավատում էին անտեսանելի ուժերի՝ ոգիների՝ չար և բարի, հայերը պաշտում էին բազմաթիվ աստվածների, որը հայտնի է բազմաստվածություն կամ հեթանոսություն անունով: (Բացատրել առնվազն 1 պաշտամունքի տեսակ):
- Համադրելհայկականնահունականհեթանոսականառնվազն 2 աստված. Զևս-Արամազդ, Աֆրոդիտե-Աստղիկ, Հերա,Դեմետրա-Անահիտ:
- Թվարկել հայկական հեթանոսական դիցարանի 5 աստծո անուն:

Դաս 2.Հոգևոր մշակույթը : Գիրը /Մանմար/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ի՞նչ տեղեկություններ են հասել մեզ Հին Հայսատանի գրի և գրականության մասին:
2. Ի՞նչ է մեհենագիրը և ո՞րտեղ են դրանք օգտագործվել:

3. Քանի՞ օտար գրահամակարգեր են կիրառվել Հին Հայաստանում:
4. Նախաքրիստոնեական Հայաստանում ի՞նչ այբուբեններ են գործածվել:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

- Հին Հայաստանում գոյություն են ունեցել հայերեն մեհենագրեր, որոնք գործածվել են տաճարներում և մեհյաններում:
- Նախաքրիստոնեական շրջանում մեր նախնիները ներմուծել և կիրառել են 5 գրային համակարգ:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

- Թվարկել Հին Հայաստանում գրի գոյության փաստը վկայող մշակութային գործիչներիի. հույն պատմիչ Փիլարտոս, Ագաթանգեղոս, Մովսես Խորենացի:
- Բացտրել, որ Հին Հայաստանում օգտագործել են արամեական և հունական այբուբենները:

Դաս 2.Հոգևոր մշակույթը : Գիտությունը /Մանմար/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Գիտության ո՞ր ճյուղն էր առավել զարգացած Հին Հայաստանում:
2.Հայոց ո՞ր արքային էին նվիրված օտարալեզու բազմաթիվ երկեր:
3. Հայոց ո՞ր արքան է հիշատակվում ողբերգությունների, ճառերի և պատմական երկերի հեղինակ:
4. Ո՞ր պատմիչն է ի մի բերել մեհենական պատմությունները, ումից էլ օգտվել է Մովսես Խորենացին:
5. Պատմագրությունից բացի Հին Հայաստանում գիտության էլ ի՞նչ ճյուղեր էին զարգացած:

2.Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

- Հին Հայաստանում գիտության ճյուղերից առավել զարգացած էր պատմագրու-թյունը:
- Հայոց արքաներից Տիգրան Մեծին էին նվիրված օտարալեզու բազմաթիվ երկեր:
- Հայոց արքաներից Արտավազդ II-ը հիշատակվում է որպես ողբերգությունների, ճառերի և պատմական երկերի հեղինակ, որոնք հայտնի էին նաև Հռոմում:
- Մեհենական պատմությունները, ի մի է բերել Մար Աբաս Կատինան:

Առարկայիչափորոշչայիննվազագույնպահանջներըկատարելուհամարսովորողը պետք է կարողանա՝

- Թվարկել գիտության մի քանի ճյուղեր, որոնք զարգացած էին Հին Հայաստանում՝ տոմարագիտություն, մաթեմատիկա, բժշկություն և այլն:

Դաս 3.Նյութական մշակույթ: Թատրոն/Մանմար/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1.Ի՞նչ է հելլենիզմը և ե՞րբ է այն սկսվել Հայաստանում:
2. Որո՞նք էին Հին Հայաստանի նշանավոր քաղաքներն ու հուշարձանները:
3. Ու՞մ արձանի բրոնզաձույլ գլուխն է գտնվում Բրիտանական թանգարանում:
4. Ո՞ր արքաների հատած դրամներն էին առանձնացվում որպես արվեստի իսկական գործեր:
5. Ի՞նչ լեզուներով թատրոններ էին գործում Հին Հայաստանում:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

- Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներից հետո՝ Ք.ա. 3-րդ դարից Հայաստանում սկսվում է հելլենիզմը՝ հունականությունը:
- Բրիտանական թանգարանում գտնվում է Անահիտ աստվածուհու արձանի բրոնզաձույլ գլուխը:
- Հին Հայաստանի նշանավոր պաշտամունքային կառույցներից էին. Նեմրութ լեռան սրբավայրը, Գառնու տաճարը, Հին Արտաշատի շինությունները:
- Արվեստի իսկական գործեր էին առանձնացվում Տիգրան Մեծի և Արտավազդ II –րդ արքաների հատած դրամները:
- Հին Հայաստանում գործում էին հունալեզու և հայալեզու թատրոններ:

Առարկայիչափորոշչայիննվազագույնպահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

- Բացատրել հելլենիզմ կամ հունականության տերմինը, որը սկզբնավորվել է Ք.ա. 3-րդ դարում հունական և ասիական մշակույթների միաձուլման արդյունքում:
- Քարտեզի վրա ցույց տալ Հին Հայաստանի նշանավոր մայրաքաղաքներից առնվազն 2-ը: